

Պահանջվող փաստաթղթեր

- Վավեր անձնագիր, կացության քարտ կամ նույնականացման քարտ,
- Բանկում աշխատավարձային հաշիվ ունեցող հաճախորդների համար՝ նամակ գործատուից, որը հաստատում է, որ Հաճախորդի աշխատավարձը կվճարվի Բանկում սպասարկվող իր բանկային հաշվին (Բանկի համար ընդունելի տարբերակին համապատասխան):
- Բանկում ոչ աշխատավարձային հաշիվներ ունեցող հաճախորդների համար, Եկամուտի աղբյուրները/չափը հաստատող պաշտոնական ապացույցներ և/կամ փաստաթղթեր, օրինակ՝ հարկային հաշվետվություն, դիվիդենդների հավաստագիր, վարձակալության պայմանագիր, բանկային հաշիվների քաղվածքներ և այլն:
- Եթե դիմողը Բանկի հաճախորդ չէ, ապա նրա բանկային հաշվի վերջին 6 ամսվա քաղվածքները՝ աշխատավարձային փոխանցումներով (աշխատավարձային հաճախորդներ), հաշիվների վերջին 6 ամիսների միջին մնացորդը հաստատող քաղվածքներ (ոչ աշխատավարձային հաճախորդներ), Եկամուտը հավաստող պաշտոնական փաստաթղթեր:
- Այլ փաստաթղթեր, որոնք կարող են պահանջվել վարկավորման գործընթացի ժամանակ:

Ի հավելումն վերոհիշյալ փաստաթղթերի, անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի համար կպահանջվեն հետևյալ փաստաթղթերը՝

- Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (բնօրինակը պահվում է Բանկում մինչև վարկի ամբողջական մարումը), անշարժ գույքի սեփականության իրավունքը հաստատող բավարար հիմքերը՝ փաստաթղթերի պատճենները (օրինակ՝ ժառանգության իրավունքի վկայագիր, առուվաճառքի պայմանագիր, որոշում, վճիռ, մահվան վկայական, լիազորագիր և այլն), սեփականատերերի/համասեփականատերերի անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները:
- Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը: Գնահատումը պետք է իրականացվի Բանկի կողմից առաջարկված անկախ գնահատող կազմակերպության կողմից:
- Բանկի կողմից հաստատված ապահովագրական ընկերությունում գույքի ապահովագրության պայմանագիրը:
- Միասնական տեղեկանք անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումից բնակելի անշարժ գույքի առկա սահմանափակումների վերաբերյալ (տրամադրել բնօրինակը):

Թարմացվել է՝ 16/01/2019 15:00